ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/308 «09» 10 2025 թ.

ԱՁ Էլմիրա Աղամյան
(ՀՎՀՀ 71104461)
ՀՀ, Նոյեմբերյան Տավուշ 1 փ/Տ/52 Ոսկևան 4113
էլ. հասցե՝ ssahak78@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ /այսուհետ՝ Պատվիրատու/ և ԱՁ Էլմիրա Աղամյանի /այսուհետ՝ Կատարող/ միջև 13.03.2025թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Հ-28 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ԱՁ Էլմիրա Աղամյանն պետք է մատուցեր վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ: Մասնավորապես՝ Պատվիրատուն վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների պահանջ առաջանալուց համառոտ նկարագրի և գտնվելու վայրի մասին ծանուցում է ուղարկում Կատարողի կողմից տրամադրված հեռախոսակապի միջոցով (զանգ կամ հաղորդագրություն) կամ էլեկտրոնային փոստի հասցեին: Կատարողը ծանուցումը ստանալու օրը 1-2 ժամվա ընթացքում պետք է վերացնի առկա թերությունները, իսկ վերանորոգման այն աշխատանքները, որոնք տեղում վերացնելն անհնար են, 1 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ուսումնասիրի, նախապատրաստվի աշխատանքների կատարմանը՝ Պատվիրատուի հետ համաձայնեցնելով կատարվելիք աշխատանքների ծավալը, բնույթը և կատարման ժամկետները:

15.09.25թ. հայտ էր ներկայացվել Կատարողի էլ. փոստի հասցեին՝ ք. Երևան Խանջյան 51 հասցեում տեղակայված ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ ԵՔՎ շենքի վերելակի վերանորոգման վերաբերյալ, նույն հայտի կատարման վերաբերյալ կրկին ծանուցվել է 30.09.25թ., սակայն մինչ օրս չի մատուցվել ծառայությունը: Վերելակը

շարունակվում է գտնվել վթարային վիճակում, ինչը վտանգավոր է շահագործել: Բացի դա ՀՀ ՆԳՆ վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 130) առկա են երկու վերելակներ, որոնք ևս ունեն վերանորոգման կարիք:

01.10.2025 թ. թիվ 15/13/267274-25 գրությամբ ԱՁ Էլմիրա Աղամյանին տրվել էր 3 աշխատանքային օր Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

06.10.2025 թ. ԱՁ Էլմիրա Աղամյանը ուղարկել է պատասխան գրություն առ այն, որ չի կարող ապահովել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից առ 06.10.2025թ-ը հաշվարկվել է յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05% չափով տույժ՝ 11132.016՝ տասնվեց աշխատանքային օրվա համար և 0.5% չափով տուգանք՝ 15 850 ՀՀ դրամ :

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և Կատարողը խախտել է ծառայության մատուցման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և ԱՁ Էլմիրա Աղամյանի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Հ-28 ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ԱՁ Էլմիրա Աղամյանին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տույժը և տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 475 500 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 317 000 ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000698 և N900008000664 հաշվեհամարներին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ԱՁ Էլմիրա Աղամյանի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

«09» 10 2025թ.

ք.Երևան

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժին
Կատարող՝ Հ. Ասատրյան
Հեռ. 010-59-66-32